

ԳԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ»: ԳԵՏԱ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԲՅՈՒԼԵՏԵՆ № 1

Հրատարակություն Հայաստանի Բնության պահպանության բնկերության,
Երևան, 1961, 69 էջ, գինը 30 կ.:

Հայաստանում սովետական կարգերի հաս-
տատման առաջին իսկ տարիներից խնդիր էր
դրվում ունենալ բնագիտական մասսայական
հանդես հայերեն լեզվով: Ներկայումս նման մի
հանդես ունենալու հրամայական պահանջն աժե-
լի է սուր դրացվում, մի հանդես, որը թեկուզ
փոքր չափով մատուցեր բնությունը սիրող հայ
բնակիչներին այնպիսի նյութեր, որպիսիք հրամ-
ցրելում են «Природа», «Наука и жизнь»,
«Знание сила», «Техника молодежи» և ու-
սերեն հրատարակվող այլ գիտա-մասսայական
հանդեսները: Եվ ահա վերջերս սկսեց հրատա-
րակվել Հայաստանի բնության պահպանության
բնկերության գիտա-մասսայական բյուլետենը՝
«Հայաստանի բնությունը», որի № 1-ը յույս տե-
սավ սույն թվականի հուլիսին: Նորածին հան-
դեսը խոստանում է իր լեզրում լուսարանել
մեր ռեսպուբլիկայի բուսական, կենդանական և
հանքային աշխարհին վերաբերող հարցերը:
Պետք է կարծել, որ նա կկարողանա թեկուզ մա-
սամբ բավարարել այն մեծ պահանջը, որ կա
բնակիչների մեջ: Սա մի գեղեցիկ
գործ է, մի վաղուց ըզձալի ձեռնարկում, որի
երևան գալը պետք է սրտանց ողջունել: Հույս
տածենք, որ «Հայաստանի բնությունը» հանդեսին
կհաջողվի մեծ չափով օգնել բնկերությանը իր
ընդհանրապես գործում ի մի բերելու: Հայաստանի
բոլոր բնագետների, բոլոր բնասերների, ան-
խտիր բոլոր աշխատավորների ուժերը և գոր-
ծելու այն հրապուրիչ նշանաբանով, որը բեր-
ված է հանդեսի առաջին էջում՝ «Պահպանենք և
հարստացնենք հայրենի բնությունը»:

Այդ նշանաբանի ոգով է զրված առաջնոր-
դող հոդվածը, որտեղ հայտարարվում է, որ
բնության պահպանումը համաժողովրդական
գործ է: Նույն հոդվածում խիստ շնորհակալ խըն-
դիրներ են դրվում՝ մասսաների մեջ զարգացնել
ուսուցիչական վերաբերմունք մեր բնության
հարստությունների և նրա գեղեցկությունների
նկատմամբ, ուսումնասիրել այդ հարստություն-
ները, նշագծվում է հանդեսի պրոֆիլը, թվարկ-
վում են նրա լեզրում լուսարանվելիք հարցերը:
Հանդեսի առաջին բաժնի վերնագիրն է

«Հայաստանի անտառները», ապա աժելի ջած
զրված է մի երկրորդ վերնագիր՝ «Անտառներն
ու բուսական ռեսուրսները»: Թե ինչու բաժինը
երկու վերնագիր ունի և ինչու բուսական ռե-
սուրսներ աժելի լայն հասկացությունը կցված
է անտառներին, միայն խմբագրությունը կարող
է բացատրել: Այս բաժինը հոդվածներով ամենա-
հարուստն է: Հաղվազյուտ և ռեկկտային բույ-
սերի մասին այստեղ երեք հոդված կա, երեք հե-
ղինակների՝ Յա. Մուրթիջանյանի, Շ. Ասլանյանի
և Շ. Գրիգորյանի հոդվածը «Ջանգղուրի ան-
տառների հաղվազյուտ ծառատեսակները» (ա-
ռաջին հոդված), Պ. Խուրշույանի «Մեր հաղ-
վազյուտ և արժեքավոր բույսերը» վերնագրված,
պետք է կարծել, հոդվածաշարքի առաջին հա-
ղորդումը՝ «Արջատիկներ» (հինգերորդ), Ա. Ն.
Արրահամյանի ռեկկասյան մրտավարդը Հա-
յաստանում (տասնմեկերորդ): Այդ երեք հոդ-
վածներից առաջինում նկարագրված են Ջանգե-
ղուրի համար հաղվազյուտ երեք ծառատեսակ-
ներ՝ արևելյան հաճարենին, կենին և արևելյան
սոսին, որոնցից վերջինը միայն այստեղ է հան-
դիպում, իսկ մյուս երկուսը՝ նաև ռեսպուբլիկայի
այլ շրջաններում: Երկրորդ հոդվածում նկարա-
գրվող արջատիկներին մեզ մոտ հանդիպում է
միայն Իջևանի անտառներում: Երեք հոդվածնե-
րի նյութն էլ հետաքրքրական է թե՛ գիտական
և թե՛ մանավանդ այդ հաղվազյուտ արժեքավոր
ծառատեսակներն ու թուփը սլահպանելու և բաղ-
մացնելու առումով, որպիսի առաջարկ անում են
հեղինակները: Պարզ չէ, թե ինչու այս նույնա-
տիպ հոդվածները իրար հետևից չեն դրված,
այլ ջրված են բաժնովր մեկ:

Նույն այդ դիտողությունը կարելի է անել
նաև երկու ուրիշ հոդվածների նկատմամբ, որոնք
վերաբերում են բնությունը հարստացնելու
հարցերին: Այդ երկու հոդվածներն են՝ Մ. Պաս-
պարյանի «Հարստացնենք Սևանի գեղեցիկ բնու-
թյունը» (երկրորդ) և Գ. Սահանյանի «Պահպանել
ու հարստացնել Կիրովականի բնությունը»
(իններորդ): Այդ երկու հոդվածներից առաջի-
նում խոսվում է Սևանա լճի նշանակության,
երբեմնի նրա ափերը անտառածածկ լինելու

մասին, ջրից ազատված հատակը անտառապատելու, այդ ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքների, ինչպես և նրա շուրջը կանաչ գոտի ստեղծելու գրավիչ հարցի մասին: Մյուս հողավածում նկարագրվում է լոռու և Փամբակի առաջներում իր հարստությամբ և բույսերի ու կենդանիների հմայիչ ներդաշնակությամբ այդ ընկենդ ընտելությունը և նրա հետագա աղքատացումը՝ անտառները անխղճորեն ոչնչացնելու պատճառով: Այս հեղինակը կանգ է առնում նրա վիճակի վերականգնման և հետագա զարգացման հարցերի վրա՝ ի միջի այլոց նա իրավամբ նշում է, որ մի քանի գործարանների արտադրած թունավոր զազերը և կեղտաջրերը մեծ վնաս են հասցնում մարդկանց՝ կեղտոտելով և թունավորելով ոչ ոք, ինչպես նաև բուսականությունը, թռչուններին, ձկներին:

Մի գրավիչ հարցի է վերաբերում վախժանգ Անանյանի «Աղնվացենք վայրի պտղատու ծառերը» հոդվածը, որի վերնագրի տակ բերված է հետևյալ լավատեսական նշանաբանը՝ «Թող լինի պտուղների առատություն մեր երկրում»: Պատկերացնում եք, հատուկ հողատարածություն պետք չէ, վայրակներ պատվաստակալներ աճեցնել պետք չէ (այդ մասին «հողացել» է բնութայինը), արմատները ձևավորելու և խնամելու կարիք չկա: Հարկավոր է անտառում աճող վայրի պտղատու ծառերի և թփերի վրա ազնիվ սորտեր պատվաստել միայն և կարճ ժամանակում կուենեանք հազարավոր հեկտարներով անտառալիներ՝ շատ ու շատ պտուղներով: Որոշ տարույն ձգտում, հմայիչ նպատակ: Պետք է առնել, որ այդ ուղիով գնացել են մեր նախնիները հարյուրամյակներ առաջ: Հիմա էլ մոլուտներն ու անտառները հատելիս և հողը՝ ցանքի համար բացելիս անտառահատի ձեռքը չի բարձրանում վայրի պտղատու ծառերի վրա, և սրանք մենք են դաշտերում մենավոր կամ փոքր խմբերով: Որոշ տեղերում (Մայկույ, Այմա-Աթա) այդ վայրի պտղատուների բազայի վրա ընդարձակ անտառալիներ են ստեղծվել: Ինչ մոտ Հայաստանում նույնպիսի փորձեր արվել են Մտեփանավանում, Երոզավանում, Գառնիում և այլուր: Այդ փորձերից մի քանիսին մասնակցել է նաև սույն տողերի հեղինակը: Ընտանալիներ ստեղծելու շարժումը մի ողակն է այն շղթայի, որ բնությունը հետզհետե, մաս առ մաս անցնում է մարդու հսկողության տակ, մտնում է նրա կուլտուրական գործունեության ասպարեզը, ընդգրկվում նրա պլանային տնտեսության մեջ: Ինչպես հոդվածի հեղինակ Վ. Անանյանն է գրում «...թերեւս դա մի ժամանակ, երբ մեր անտառներում վայրի միջոց նույնքան դժվար հարվի, ինչպես այժմ արևալուստի միջոց է հազվագյուտ անտառի մեջ»: Սակայն չպետք է շատ

էլ հեշտ պատկերացնել այս գործը: Այստեղ հրմտություն է պահանջվում թե՛ սորտերի ընտրու, թյան մեջ, թե՛ ծառերը ձևավորելիս, թե՛ սորտերի բաշխման մեջ, թե՛ վնասատուների և հիվանդությունների դեմ պայքար կազմակերպելիս և այլն: Չպետք է մոռանալ ի. Վ. Միշուրինի ուսմունքի այն դրույթը, որ վայրի ծառերը խիստ կայուն են իրենց ժառանգականությամբ և ազդում են նրանց վրա պատվաստած ազնիվ սորտերից շատերի վրա և վատթարացնում պտուղների որակը: Պետք է սորտերի ընտրությունը կատարել շրջահայաց կերպով, հարկավոր է հիմնականում վերցնել տեղական պայմաններին վարժված և ժառանգորեն կայունացած սորտեր, որովհետև նորաստեղծ և երիտասարդ սորտերը մեծ մասամբ հեշտ են ենթարկվում վայրի պատվաստակալի ազդեցությանը: Ուրիշ բան, եթե պատվաստենք սերմից աճած միամյա կամ երկամյա վայրակները, ինչպես հեղինակն էլ առաջարկում է, այստեղ արդյունքն ավելի ուշ կբուսացվի, բայց ավելի հաջող: Չպետք է մոռանալ նաև, որ պտղատու ծառերից շատերի բերքը ապահովվում է միայն մոտակայքում համապատասխան փոշոտիչ լինելու դեպքում:

Իհնք դժվարանում ենք հավատալ հեղինակին, թե 1962 թվականին կավարտվի մեր անտառների բոլոր վայրի պտղատուների պատվաստումը: Կարծում ենք, որ այդպիսի հապճեպությունը գործին շատ օգուտ չի բերի, էլ չենք ասում առաջարկի անհնար լինելու մասին: Թող այդ գործի կատարումը մի քանի տարի տևի, մինևույն է, ոռմանտիկան նրանից չի վերանում, իսկ արդյունքը, թեպետ մի փոքր ուշ, բայց ավելի հաջող կլինի:

Նրկու հոդված էլ կա նոր պտղատու ծառեր տարածելու մասին: Իհնք պատկանում է է. Էնֆիաջյանի դրչին և կոչվում է «Տարածենք արևելյան խուրման Հայաստանում» (չորրորդ): Խոսքն այստեղ մի մերձարևադարձային պտղատու ծառի մասին է, որն արդեն փորձարկվել է մեր ռեսպուբլիկայի որոշ կետերում և լավ արդյունք է տվել, մանավանդ նրա որոշ սորտերը: Մյուս հոդվածը վերնագրված է «Հայաստանում հնարավոր է աճեցնել շագանակենի» (վեցերորդ), հեղինակն է Կ. Ի. Աղամյանցը:

Հետաքրքրական է «Մեր դեղաբույսերը» հոդվածը, որը գրել է Ս. Ջոլոտնիցկայան: Միայն թե հոդվածում ընդհանրապես բոլոր դեղաբույսերի մասին չի դրված, ինչպես կարելի էր ենթադրել վերնագրից, այլ միայն մեկ դեղաբույսի՝ չիկատակի մասին: Հատ երևույթին, մոռացել են դնել ենթավերնագիրը: Բացի դրանից, վերնագրի և հեղինակի ազգանվան փոխադարձ դասավորությունից երևում է, որ Ս. Ջոլոտնիցկայան շարունակելու է այդ շնորհակալ գործը, և հետա-

յա համարներում մենք կկարգանք այլ զեղարույսերի մասին, որոնցով այնքան հարուստ է մեր ռեսպուբլիկան։

Հայաստանի վայրի ցորենների տարածման և ուսումնասիրման մասին պրեյ է Պ. Ա. Ղանդիլյանը։ Բերված տեղեկությունների շարքում հեղինակը չի հիշատակում այն փաստը, որ սույն տողերի հեղինակը 1925—1929 թվականներին վայրի ցորենների մեծ մասսիվներ է հայտնաբերել Երևանի շրջակայքում, այդ մասսիվներում է գտնված առաջին պիկակոթիկո ցորենը։

Վերջապես, մի փոքր հոգվածում՝ «Սևանի բուսարանական այգին», Վ. Աղարյանը շարադրել է նրա տասնյոթամյա պործունեության արդյունքները։ Պետք է ասել, որ Սևանի ափին այդպիսի փորձագիտական հիմնարկ ունենալը շատ կարևոր է, և այդին պայլի աշխատանք է կատարել։ Բավական է ասել, որ նրան հաջողվել է հոգմերով հարուստ այդ ծառամերձ համարվող վայրում աճեցնել ավելի քան 450 տեսակ ծառեր ու թփեր։ Այդին կատարել է նաև այլ աշխատանքներ։

Հետևյալ մեծ բաժինն է «Հողերի պաշտպանությունը և ջրային ռեսուրսները»։ Առաջին էջի վերևում, նկարի հետ գրված է «Պաշտպաններ մեր հողերը Հողիայից» նշանաբանը։ Եթե մենք Ա. Քոչարյանի համարյա նույնանուն հոգվածից բերենք միայն մեկ տվյալ, որ վերջին տարիներին Հողիայի պատճառով մոտավորապես 126,000 հեկտար տարածություն դուրս է մնացել պուպատնտեսական օգտագործումից, ապա այդ ահալոր թվից մեզ համար պարզ կլինի, թե որքան կենսական հարց է շոշափում հեղինակը։ Նա իր հոգվածում հակիրճ տալիս է մի շարք դատողություններ Հողիայի մասին, առաջարկում է միջոցառումներ նրա դեմ պայքարելու համար։

Այս բաժնի երկրորդ հոգվածը՝ «Կանաչ կերային տարածությունների պահպանումը», պատկանում է Շ. Մ. Աղարարյանի գրչին։ Հոգվածը բովանդակային է։

Շատ կարևոր հարց են շոշափում Ա. Գևորգյանը և Ի. Շեկոյովան «Խաղիոնայ օդադուրծներ լրային ռեսուրսները» խորագիրը կրող հոգվածում։ Նրանք կոնկրետ տվյալներ են բերում առանձին ջրային ռեսուրսների օդադուրծման կանաչների մասին, ջրի կորստի պատճառների մասին։ Շատ ցանկալի կլինի, եթե նրանք, թեև կոչ այդ մասը կրճատելու հաշմին, ավելի մանրամասն պրեին, թե ինչպես պետք է մարմնի մեր երկրի համար տներան կարևոր ջրային ռեսուրսները ուղղիմուտ օդադուրծելու համար։ Ըստ երևույթին, նրանք այդ հարցը կրճատելիս իրենց հետադու հուշածներում։

«Մարդկային ծովային և բույսերի պաշտպա-

նություն» բաժնում վեց հոգված կա։ Զ. Ա. Աստվածատրյանը իր «Հումնածագիկ» հոգվածում նկարագրում է ուղղաձիգ կանաչապատման համար արժեքավոր, ներմուծած մի նոր փաթաթվող բույս՝ լումնածագիկը, որն աճում է մինչև 8—10 մետր։

Ա. Մ. Բարսեղյանը իր «Ջրաշուշան» հոգվածում ջրամբարների շորացման և ջրաբույսերի անհետացման մասին արած մի քանի խորհրդածություններից հետո նկարագրում է ջրերի զեղեցիկների ջրաշուշանը կամ հարսնամատը, նրա բիոլոգիան և դեկորատիվ արժանիքները։ Հեղինակը գտնում է, որ ջրաբույսերի այդ տեսակը պետք է տարածել մյուս բնական և արհեստական ջրամբարներում։

Ապա բերված են Ա. Սրբաշուշանի կազմած «Խորհուրդներ սենյակային բույսերի խնամքի մասին»։ Շատ ցանկալի է ծավալել այդպիսի խորհուրդները նաև մյուս բաժինների վերաբերյալ՝ թռչուններ և այլ կենդանիներ պահելու, հավաքածուներ կազմելու, բույսեր պատվաստելու մասին և այլն։

Այդ նույն բաժնում երեք հոգված կա բույսերի պաշտպանության վերաբերյալ։ Ն. Հ. Կարապետյանի «Ոչնչացնենք պտղձն ամենուրեք» հոգվածում նկարագրված են դադձի մեզ մոտ հանդիպող երեք ամենավնասակար տեսակները։ Ինչպես կարելի էր ենթադրել վերնագրից, այստեղ բերված պետք է լինեին նաև նրանց դեմ պայքարելու միջոցառումները, սակայն դրանց մասին համարյա ոչինչ չկա։

Հ. Գ. Թումայանի «Թռչունները մեր պաշտերի, այգիների և անտառների պաշտպաններն են» հոգվածը կարդալով՝ սկսում ես ավելի շատ համակրել մեր փետրավոր բարեկամներին, որոնք ոչ միայն իրենց ծվլոցով աշխուժացնում են մեր շրջապատը, այլև մեծ շափով նպաստում են բերքի պահպանմանը։ Հետաքրքիր է գրված նաև պիշատիչ, բայց օգտակար միջատ զատկի մասին։

Հաջորդ մեծ բաժինը կոչվում է «Մեր կենդանական աշխարհը» և միայն մեկ վերնագիր ունի։ Համարյա նույն վերնագիրն ունի հենց առաջին հոգվածը՝ «Հայաստանի կենդանական աշխարհը»։ Գ. Ավագյանի այս հոգվածի միայն սկիզբն է բնականորեն առմամբ կենդանական աշխարհին վերաբերում, իսկ նրա մեծ մասում նկարագրվում են պլանավորապես տնտեսական նշանակություն ունեցող և պաշտպանություն պահանջող մի բաժնի արմերավոր կաթնասուններ ու թռչուններ՝ առձյամբ, հայկական մուֆլոնը, վայրենակերպը, արոտը և այլն։ Հոգվածում խոսվում է նաև ներմուծած և մեր կլիմային վարմեցրած կենդանիների՝ սև արծաթափայլ ալվե-

սի, ճահճակողրի, ուսուցիական եղջերուների մասին:

Ներմուծած մի թուումի՝ փաստանի, նրա բիւլոդիայի և մեզ մոտ կազմակերպված նրա տնտեսութեանն է վերաբերում Ա. Հ. Չիլինգարյանի հոդվածը՝ «Փաստանի Հայաստանում»:

Շատ հետաքրքրական է Ա. Գ. Դատիկյանի «Սեանի կենդանական աշխարհը» հոդվածը, որի մեջ հեղինակը պատմում է հատկապես ձկների, նրանց տեսակների, բիւլոդիայի, ներմուծած ձկների, ինչպես նաև մի շարք ձկնորսական հարցերի մասին՝ կապված լճի մակարդակի իջնման և փոքրացման հետ:

Նկատելի է, որ երբ հոդվածի վերնագրում կա կենդանական աշխարհի արտահայտություն, ապա, որպես կանոն, խոսքը վերաբերում է կաթնասուններին և թռչուններին, այն էլ նրանց արմերավոր տեսակներին: Այնպես կրճողները, մանր ու խոշոր գիշատիչները, սողունները, երկկենցաղները կենդանական աշխարհի մասը չեն կադմում: Էլ չենք խոսում կենդանիների ամենամեծ խմբի՝ միջատների, ինչպես և մյուս հոդվածոտանիների մասին, որդերի, փափկամարմինների մասին, վերահիշյալ հոդվածների հեղինակները սրանց հիշատակելն անգամ արժանի չեն համարում: Կենդանական աշխարհը կենդանական աշխարհ է և ոչ թե միայն որսի կենդանիներ: Կամ թե հարկավոր է վերնագիրը հոդվածի բովանդակությանը համապատասխան դնել:

Այս բանի հոդվածներից մեկը վերաբերում է գյուղատնտեսական մեծ նշանակություն ունեցող մեղվին: Հոդվածի վերնագիրն է «Պահպանել ընտելյան հրաշագործներին»: Հեղինակն է Ա. Մ. Կոթոյանը:

Ա. Կոթոյանի «Ակվարիումի կուլտուրան» հոդվածում բերվում են պատմաբանական տվյալներ ակվարիումի կուլտուրայի մասին, քննարկվում են նրա նշանակությունը և հետագա զարգացումը: Հուսով ենք, որ հաջորդ համարներում կարգի, թե ինչպե՞ս պետք է խնամել ակվարիումի բույսերն ու կենդանիները, ինչպե՞ս պետք է այն օգտագործել առանձին շրջաններում տարածված ջրային կենդանիներն ուսումնասիրելու համար, ինչպե՞ս պետք է պահել ակվարիումը դպրոցում և այլն:

Վերջապես, բանի վերջին հոդվածը՝ «Բարեյազանք որսորդական տնտեսությունը», որի հեղինակն է Հ. Ավետիսյանը, վերաբերում է մի ցավոտ խնդրի՝ հետզհետե նվազող որսորդությանը: Հեղինակը հետաքրքիր տվյալներ է բերում որսորդության վիճակի մասին Ուրևանի շրջակայքում 30—40 տարի առաջ և ընդհանուր առմամբ, թե ինչպես որսագողության և արժեքավոր կենդանիները անխղճարար ոչնչացնելու հետևանքով որսը խիստ պակասել է:

Հաջորդ բանում, որի վերնագիրն է «Մեր կուրորտային տնտեսները և հանրային շրեքը», ընդամենը երկու հոդված կա: Դրանցից մեկը Ա. Ս. Ջանջուտովայի «Հայաստանի բնական ռեսուրսները» խորագիրը կրող հոդվածն է, վերաբերում է մի հրատապ հարցի, որի մասին էլի հոդվածներ կարելի է գրել: Մյուսը Ջ. Ս. Եմազոնյանի «Ջրերի սրբապետը և զիտությունը» հոդվածն է:

Չնայած, որ Հայաստանը շատ հարուստ է զանազան հանածոներով, բայց և այնպես, «Մեր օգտակար հանածոները» բանում ընդամենը մեկ հոդված կա՝ է. Դավիդովայի և Մ. Տեր-Սահյանի «Հայաստանի շինանյութերը և նրանց ռադիոնայ օգտագործումը»: Այդ հոդվածից երևում է, որ արդյունահանման շատ անկատար եղանակներ կիրառելու պատճառով մեր հիանալի շինարարի՝ աուֆի միայն մոտավորապես 1/3-ն է օգտագործվում բուն նպատակով, իսկ մնացածը, պատկերացնում եք, մեծ մասը համարյա ապարդյուն կորչում է: Միանգամայն հասկանալի է հեղինակների դժգոհությունը այդ երևույթի հանդեպ և նրանց համառ պահանջը՝ դրությունը շտկելու և կորուստների դեմ ամեն կերպ պայքարելու մասին:

«Պատանի բնասերների անկյուն և բնագիտությունը» դպրոցում» բանում մենք տեսնում ենք միայն երկու հոդված: Առաջին հոդվածն է Լ. Կ. Յիգինի նախնային դպրոցականներին՝ «Աճեցնել զեղին ակադեմիան»: Այս բույսը թիթեռնածաղկավորների ընտանիքին պատկանող մի թուփ է, որը մեզ մոտ մշակվում է որպես դեկորատիվ: Հոդվածում այն միտքն է արձագանքում, որ զեղին ակադեմիայի սերմերը նույնպես կարող են պործնական նշանակություն ունենալ, քանի որ սնկոցանյութերով, հատկապես սպորտակուցով հարուստ են: Հեղինակը հանձնարարում է այդ թուփը փորձարկել պանդան տեղերում և խնդրում է սերմեր ուղարկել իրեն՝ Մոսկվա, պիտավոր Բուսարանական այգի: Հոդվածի վերջում հանդեսի խմբագրությունը պատանի բնասերներին առաջարկում է տեղերում փորձարկել զեղին ակադեմիան և արդյունքների մասին գրել իրեն՝ խմբագրությանը: Թվում է, թե խմբագրությունը այլ կերպ պետք է վարվեր՝ նա չպետք է յուրովի կարգադրեր գործը, այլ հիմնականում միայն միջնորդի ու օգնողի դեր կատարեր: Մյուս հոդվածն է «Բիւլոդիայի դասավանդման հարցերը» դպրոցում: Հոդվածի հեղինակ Յա. Մուրջիջանյանը սրում է ուշադրությունը դպրոցում բիւլոդիայի դասավանդման անբավարար դրվածքի վրա: Նա իրավամբ պնդում է, որ բիւլոդիայի դասավանդումը կարող է արժեք ներկայացնել միայն այն դեպքում, երբ ապահովված է կենդանի նմուշների ցուցադրումով, արտադրա-

տարանային աշխատանքներով հողամասում, կենդանի անկյունում, ինչպես նաև դեպի բնություն կատարած էքսկուրսիաներով: Ցավալի է, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասունմեկերորդ տարում մենք դեռ ստիպված ենք վերադառնալ այդ հարցին, մանավանդ որ Միության շատ սեղերում այդ ուղղությամբ մեծ դործ է կատարված: Հուսանք, որ այդ շնորհակալ դործում իր լուծման կմտցնի «Հայաստանի բնություն» հանդեսը, և այն էլ ոչ թե բառացի մի լուծա, այլ այնքան, որքան վաղի է 60,000 անդամ ունեցող բնկերության օրդանին:

Հետաքրքրական տեղեկություններ են բերվում «Պատանի բնասերների աշխատանքը տեղերում» բաժնում՝ նրանց կազմակերպած «Թրոշնի օրվա», «Ծաղկի տոնի», «Այդու շաբաթի», «Անտառի շաբաթի» մասին:

Ապա նկարագրված է Այդր լիճը որպես մեր բնության տեսարժան վայրերից մեկը:

«Հայաստանի բնություն» հանդեսը հեռու չի մնում երաշխական ռեսուրսիկաներում և արտասահմանում կատարված նույնատիպ աշխատանքներից: Համապատասխան բաժնում կա երկու հոդված՝ «Աստրախանի պետական արդեկանոցը» և Ն. Պ. Միրիմանյանի «Բնության պահպանումը ՀՀ աստանում»: Այս բաժնի նշանակությունը մեծ է մանավանդ այն պատճառով, որ Հայաստանի Բնության պահպանության բնկերությունը դեռ քիչ փորձ ունի:

Չենք կարող կանգ չառնել «Բնության օրացույց» բաժնի երկու հոդվածների վրա: Առաջինը Ռ. Մկրտչյանի և Լ. Հարությունյանի հոդվածն է՝ «Կազմակերպենք ֆենոլոգիական դիտումներ» խորագրով: Դրանց կատարումը մասսայական դործ է և հատուկ պատրաստություններ չի ներկայացնում: Հիմնականում հարկավոր է երկու բան՝ սեր դեպի բնությունը ու նրա մեջ կատարվող պարբերական երևույթները և այդ երևույթները դիտելու ու դրի առնելու ցանկություն: Ցանկալի է, որ հանդեսի առաջիկա համարներում կամ առանձին դրքույկով տպագրվեն հրահանգներ, թե կոնկրետ ի՞նչ օբյեկտներ պետք է դիտել, նրանց պարզացման ո՞ր փուլերը նշել, ինչպե՞ս կազմակերպել դիտումները, ինչպե՞ս մշակել արդյունքները, ո՞ր ուղարկել դրանք և այլն:

Հարուստ փորձի և բազմամյա դիտումների հիման վրա է դրված Ա. Գ. Ներսիսյանի «Գարունը Հայաստանում» հոդվածը:

Ապա հաջորդում են ես մի քանի կարևոր բաժիններ՝ «Սոնսուլտացիա», «Խրոնիկա», «Գիտական ամսագրերի չհրից», «Հարց ու պատասխան»:

Հանդեսը չի մոռանում այն դործիչներին, որոնք իրենց ամենօրյա մրաջան աշխատանքով

դժալի ներդրումներ են կատարել՝ հարստացնելով և զեղեցկացնելով հայրենի բնությունը: Սույն համարում մենք կարգում ենք մեր ռեսուրսիկայի կանաչապատման և անտառատնտեսության վիտերան Մարգարիտա Բեգլարի Դանիելյանի բեղմնավոր դործունեության մասին: Բերված է նրա պորտրեն:

Ներկայացված է նաև ծաղկաբուծության էնտուզիաստ-հայրենադարձ Գ. Գալստյանի պորտրեն:

Խմբագրությունը չպետք է մոռանա նաև նախորդ սերունդների այն աշխատողներին, որոնք այժմ կենդանի չեն, սակայն իրենց անձնվեր աշխատանքով նախապատրաստել են մեր այսօրը: Նախասովետական շրջանի մի շարք ամենակարկառուն դործիչներից մեկը Ղևոնդ Ալիշանն է, որը հայրենիքից հեռու դռնվելով հանդերձ՝ միշտ հետաքրքրվել է նրա աշխարհագրությամբ, նրա բույսերով, զրել է նրանց մասին: Սովետական շրջանի դործիչներից պետք է հիշել լուսավորության ճակատի էնտուզիաստ ֆիզիոլոգ Տ. Պ. Մուշեղյանին, որը առաջինը զրել է գիտամասսայական հանդես ունենալու հարցը դեռ 1922—24 թվականներին: Զդալի դործ է կատարվել Լ. Լ. Բեղլյանը, որը ոչ միայն բուսաբանություն է դասախոսել մեր ԲՈՒՀ-երում, այլև դասադրքեր է կազմել, ինչպես և հրապարակել է բույսերի օդընտելացման (ակլիմատիզացիայի) մասին իր պրած առաջին հայերեն ձեռնարկը: Նա երկար տարիներ աշխատել է նաև բույսերի անունների բառարանի վրա: Ա. Գ. Տեր-Պողոսյանի ղեկավարությամբ և նրա զրքերով են սովորել երիտասարդ կենդանաբանների մի քանի սերունդներ: Լ. Կ. Մաղաքյանը մեր մարգագետինների և արոտավայրերի անխոնջ հետազոտողն է իզել շատ տարիների բնթացքում: Մեծ աշխատանք է կատարել երկրաբան Լ. Կարապետյանը:

Ինչպես տեսնում ենք, «Հայաստանի բնություն» հանդեսը մի շարք բնագավառներ է բնդորկում և նրա էջերում բերված նյութերը շատ բազմապես են: Այս տեսակետից հանդեսը լավ է սկսել իր գործը: Սակայն նույնը չենք կարող ասել առանձին հոդվածների մասին: Դրանք իրենց որակով շատ խայտաբղետ են: Հաճախ իրենց կառուցվածքով լրագրական հոդված են հիշեցնում կամ պաշտոնական հաշվետվություն, բայց ոչ բարձրորակ հանդեսային հոդված:

«Հայաստանի բնություն» հանդեսի անդրանիկ համարում կան լավ գրված, տրամաբանորեն կառուցված հոդվածներ: Դրանցից են՝ «Գարունը Հայաստանում», «Կանաչ կերային տարածությունների պահպանումը», ինչպես նաև «Հունածաղիկը», «Ջանգեղուրի անտառների հազվապյուտ ծառատեսակները», «Թռչունները մեր

դաշտերի, այգիների և անտառների պաշտպաններն ենք և այլն:

Հողվածներից մի քանիսը սկսվում են բնականուր ներածություններով, որոնք, որպես կանոն, խախտում են նրանց ամբողջականությունը և թուլացնում տպավորությունը: Լեյզյանի հողվածներից են՝ «Պայքարենք հողի էտոդիայի դեմ», «Սեանի կենդանական աշխարհը» (առաջին պարբերությունը), «Լեռջատխյենի» (սկիզբը): Ինչո՞ւ, խմբագրությունը այդ ավելորդ գեղումները անխնա չի ջնջել. չէ՞ որ դրանով նա բարի գործ կլինի կատարած թե՛ հեղինակի և թե՛ մանավանդ բնակրացիների համար:

Հանդեսի և լրագրի հողվածները նույն ոճով չպետք է լինեն կազմված: Լեյզյանի տեսակետից ոճի դեմ մեղադրում են հետևյալ հողվածները՝ վերնվում հիշատակված «Պայքարենք հողի էտոդիայի դեմ», «Մեացիանալ սդատդործենք ջրային ուսուրսները», «Լեկվարիումի կուլտուրան» (հատկապես նրա վերջին պարբերությունը, ինչ լավ կլինի, որ այն բոլորովին չլինի), ինչպես նաև «Հարստացնենք Սեանի գեղեցիկ բնությունը» հողվածի որոշ մասերը և այլն: Մենք կարող ենք դա բացատրել խմբագրության թուլավորությամբ: Լեռջատիցից հանդամանը կարող է ծառայել միայն այն, որ Հայաստանի բնության պահպանության բնակրությունը գեո շատ երիտասարդ է, իսկ նրա սրգան «Հայաստանի բնությունը» նոր է խանձարուրից դուրս գալիս, իսկ ձևավորման այդ շրջանում զգացումային գեղումներ, ավելորդ բնականուր հայտարարություններ սովորաբար ավելի շատ են լինում, քան հետևողականորեն կատարվող դործ:

Հանդեսում իրենց տեղը պետք է ունենան գանազան նշանաբանները, դրանք կարելի է բերել առաջնորդությամբ, բաժինների վերնագրերին կից և մի քանի այլ տեղերում, այն էլ շատ սահմանափակ, բայց ոչ երբեք առանձին հողվածներում: Իրանից հողվածները շատ են հասարակ դասում՝ նրանց արժեքը խիստ պակասում է, և այն տպավորությունն է ստացվում, որ հեղինակը բուն նյութի վերաբերյալ ասելու շատ բան չունի: Ինչպես գտնվում և կարելի է ներել, որովհետև բնությունը չսիրողներ, նրա բուսական, կենդանական և հանքային հարստությունները անհողի կերպով վատնողներ, գանազան որսագողներ, ծառահողեր և այլ կարգի գողեր ու հասարակական խղճից դուրս մարդիկ գեո կան: Ինչպե՞ս կարող է հողվածագիրը դրանց չկշտամբել: Ինչ սկզբնական պաթետիկ արտահայտություն մի ձևն է, սակայն բոլորովին ոչ խրախուսելի:

Հանդեսում կան նաև թույլ հողվածներ: Ըստ երևույթին, դրանց հեղինակները լավ չեն մշակել իրենց հողվածները, մի քանի անգամ չեն ստու-

գել ու արտադրել, իսկ խմբագրությունն էլ բաց է թողել առանց 3—4 անգամ բնակրելու և շրջակելու: Չպետք է մոռանալ, որ հանդեսը գիտամասնագիտն է, և եթե անմշակ տեղերը և սխալները գիտակ բնակրացիին չեն կարող վնասել, ոչ մասնագետին կձգեն անկատարական թյուրմացություն մեջ:

Կանգ առնենք հանդեսում հանդիպող գանադություններից մի քանիսի վրա:

Պետք է ասել, որ հանդեսի որոշ էջերում կան սխալներ, ինչպես և թյուրիմացության տեղիք տվող անփութություններ: Օրինակ, 9-րդ էջի ձախ սյունակում գրված է, որ իբր թե մեզ մոտ վայրի բալ կա: Վայրի բալ բնականուր գոյություն չունի, տեղ-տեղ հանդիպում է վայրենացած բալին: 10-րդ էջի աջ սյունակում Միշուրիների ստեղծած խնձորենու սորտերի թվում բերվում է նաև «Լեռնառային գեղեցկուհի» սորտը: «Լեռնառային գեղեցկուհին» ոչ թե խնձորենու սորտ է, այլ տանձենու: Բացի դրանից, այն ոչ թե Միշուրիին է ստեղծել, այլ խնդարեղաբար առաջացել է Բեյդիայի անտառներում: Միշուրիներ չունի նաև խնձորենու «Շաֆրան» սորտը: Նա Շաֆրանը (Օռնանի Թենետը) խաչասերել է խնձորենու այլ սորտերի հետ և ստեղծել է հետևյալ սորտերը՝ Լեռնանովկա շաֆրանային, Շաֆրանկիտայկա, Շաֆրան-Նյուսիտային աշնանային:

13-րդ էջի ձախ սյունակում, թվում է, թե նույնացված են բուսականություն և ֆլորա հասկացությունները:

29-րդ էջի ձախ սյունակում գրված է, որ սենյապների ուժեղ լուծույթները աչրում են արմատները: Սա շատ դժբաժանական արտահայտություն է, բայց նիշտ չէ նկարագրում երևույթը: Կոնցենտրիկ լուծույթներից արմատները ոչ թե աչրվում են, այլ ջրազրկվում, չորանում են:

31-րդ էջի աջ սյունակում ծիծեռնակներ և մալալուկներ բառերի միջև ստորակետը բաց է թողնված: Ինչ մեծ սխալ չէր լինի, եթե այդ թռչունները սխալմամբ իրար մոտ համարվելիս չլինեին: Ծիծեռնակները և մալալուկները ոչ միայն տարբեր ցեղերի են պատկանում, այլև տարբեր բնապահների: Նույն թյուրիմացությունը կարող է բխել նաև այդ սյունակի վերջին տողերում բերված նախադասությունից՝ «Նույնը կարելի է ասել և ծիծեռնակի այլ տեսակների մասին»: Լեյզյան նախադասությունը գրված է մալալուկների նկարագրությունից անմիջապես հետո:

50-րդ էջի աջ սյունակում գրված է, «Գեղին ակացիայի սերմերի սպիտակուցը պարունակում է մինչև 15 տոկոս յուղ և մինչև 10 տոկոս շաքար»: Սպիտակուցը բառը բուսաբանության մեջ գործ է ածվում երկու իմաստով՝ քիմիական և մորֆոսյուրիական: Եթե տվյալ դեպքում մենք սպի-

տակուց բառը բնդունենք որպես քիմիական հասկացություն արտահայտող, սույա գծվար է հաշտվել այն մտքի հետ, թե նրա մեջ յուզ ու բարտը կաւ 'Կա կլինեւ ոչ թե սպիտակուց, այլ երեք նյութերի խառնուրդ։ Ըստ երեսյթին, սպիտակուց բառը այստեղ գործ է ածվում մորֆոլոգիական իմաստով։ Լեզպես է նաև կոչվում որոշ բույսերի սերմերի մի հատուկ մասը՝ Էնդոսպերմը։ Բայց մենք դարձյալ գծվարության ենք զեմ առնում։ Թիթեհնածաղկավորների բնատնիքի մեջ մանուղ բույսերի, այդ թվում է գեղին աղացիայի սերմերը Էնդոսպերմ, այսինքն՝ մորֆոլոգիական իմաստով սպիտակուց չունենւ։ Լեյդ սերմերում բոլոր տեսակի սննդանյութերը պտնվում են ծիլի առաջին գույզ ձեւափոխված տերեւերում՝ շաքիչներում։

57-րդ էջի աջ սյունակում գրված է՝ «Կեն-
դանի միջատներով սնվող սիրվինիա» Նախ, այդ
անունով բույս գոյություն չունի. բացահայտվին,
պետք է լինի սալվինիա. որք ջրաբույսի փոքր
պտերաբույս է. Երկրորդ, սալվինիան երբեք
կենդանի միջատներով չի սնվում:

Միտայ պետեր է համարել, նաև «նույն օրն իսկ» բառերը, որ բերված են 59-րդ էջի աջ սյու-
նակում: Խոսքը վերաբերում է հիշողությանը
չվատահերան և գիտությունները շատապ պրանցիու-
կարենություններ: Մեզ թվում է, պետք է խորհուրդ
տալ պրանցիուները կատարելու «խակույն» հեթ,
անմիջապես, դռնն նույն օրը:

Գիտական տերմինաչինարարությունը դարձրեց համարապետ գիտ շատ վատ է դրված, և նոր տերմինները վայրփվերու են կաղմվում: Առանց խորանալու դրա պատճառների մեջ, ասենք միայն, որ տերմինների շփոթությունը խիստ խանգարում է գիտություն մասսայականացմանը, էլ չենք խոսում գիտական մտքերը ճշգրիտ արտահայտելու մասին: Կրկնակի ուշադրություն պետք է դարձնել տերմինների ճշտությանը, բնորոշված լինելուն, բարենշտունությունը: Բերենք մեր նկատած անհաջող տերմինների մի քանի օրինակ:

ձ-րդ էջի ձախ սյունակում սերմ տվող ծա-
ռերի համար գործ է ածվում սերմնաբան քաղը-
նախ ինչու սերմնաբան (քառացի նշանակում է
սերմերի գտնվելու տեղ) և ոչ թե սերմնակալ,
սերմնալու: Երկրորդ, կարծում ենք, հոգվածի
հեղինակներին հայտնի պետք է լինի, որ սերմ-
նաբան քաղը վաղուց գործ է ածվում որպես
տնտես վարտանդի ստորին լայնացված մասի, որի
մեջ տեղի է ունենում բեղմնավորումը և առա-
ջանում են սերմերը:

Շատ տեղերում տեսակ բառը պարծ է ան-
վում սորա բառի փոխարեն (էջ 10, 11, 12 և
այլն)։ Իրանը խիստ սառըներ հասկացա՞վյուններ
և հարկավոր էլ չիտթել։

14-րդ էջի ձախ սյունակում գրված է քրիս-
կեկի, 16-րդ էջի ձախ սյունակում՝ բոխենի,
63-րդ էջի աջ սյունակում՝ սոճենի, պետք է լինի
թխկի, բոխի, սոճի մերիշ բան է, որ մենք առում
ենք չափանակեկի, որովհետև այդ ժառր շաղա-
նակ է առլիս Լանդեսի այլ տեղերում, բնդնա-
կառակր, պտղատու ծառերը անվանվում են
առանդ եկի վերջավորությանը Սրինակ, 18-րդ
էջի աջ սյունակում գրված է ծիրան, 60-րդ էջում՝
նուշ, սերկեխ, պետք է լինի ծիրանենի, եշենի,
սերկեկենի:

Ինչո՞ւ ասել զեռնանկարով, երբ մենք ունենք մորի, ելակ զեղեցիկ բառերը, կամ ինչո՞ւ մալի-
նան առնանել արժաւամորի, երբ ժողովուրդն այն
կոչում է մոռ, որը մօտի է զրականության մեջ
(18-րդ էջի ձախ սյունակ)։

Շատ ճապարհ է զեռնի երեսի ջրեր արտահայտովյալը (26-րդ էջի աջ սյունակ), ավելի հարմար է ասել մակերեսային (ինչպես սովորաբար գործ է ածվում) կամ էլ ավելի լավ՝ վերերկրյա ջրեր:

Վերջին տարիները շատ հաճախ ան բառը
սխալմամբ գործ են ածում անուր բառի փոխա-
րեն։ Այդ սխալն արված է 27-րդ էջի երկու
սյունակներում էլ։ Անուր կոչվում է աճելու
պրոցեսը, ահումը շարունակվող գործողություն
է, իսկ ան ասելիս հասկացվում է այդ պրոցեսի
արդյունքը որոշ ժամանակամիջոցում, օրինակ՝
մի տարվա ան։

36-րդ էջի աջ սյունակում կուտուրա բառը
զործ է ածվում բույս բառի փոխարենը, հաճախ
փոխարինվում են ոչ թե կուտուրաները, այլ բույ-
սները, տվյալ դեպքում կուտուրական՝ մշակովի
բույսերը։ Հաջող տերմին չէ տարբարացնում
բառը (նույն տեղում)։

Հանդեսի շատ տեղերում հանդիպում ենք լրվում բառին (էջ 22, 50, 57), որը գործ է ածված առանձին թվի համար, մինչդեռ թվում ճշանակում է շատ թվեր միասին վերցրած։ Ուտ վերջավորությունը հավաքականի իմաստ է տալիս բառին. օրինակ՝ կաղնուտ, սոճուտ, նշանակում է կաղնիներից, սոճիներից կազմված առետու, պուրակ։ Ոխալ է նաև տտիլ, որ լճի ջրից ազատվող հատակը ձածկված է ավազուտ-հեւով։ Պետք է ասել՝ ավազով կամ՝ ջրից ազատվող տփերը ավազուտներ են (8-րդ էջի ձախ նշանակ)։

Ինչո՞ւ ասիլ լուցնալու նշանակ. Երբ խոսքը արհեստական թույնարեներին է վերաբերում, որտեղ տեսակի մի թույններն ազատ ելումուտ ունենւնանալու համար անհրաժեշտ է անհրաժեշտ թույնները անհրաժեշտ (ՏՅ-րդ էջի ձախ կողմից) :

Ճշ-րոյ էջի ձախ սյունակում գրված է կամ-
լուսի, պետք է լինի՝ կամրիումի:

Հանդեսի գանազան հոգվածներում քիչ չեն նաև լեզվական սխալներն ու անհարթությունները: Ցանկալի է, որ «Հայաստանի բնություն»-ը իր առջև խնդիր ունի պարարել ոչ միայն մեր բնության պահպանության, այլև մեր լեզվի մաքրության պահպանման համար:

Համարյա բոլոր էջերում հանդիպում ենք սառուսխալների և տպագրական սխալների: Որինակ՝ 15-րդ էջում տպված է զիոսցիամին, հայերեն պետք է լինի հիոսցիամին: Նույն էջում տպված է Սարոստեր, պետք է լինի Սարոնստեր:

18-րդ էջում ջանալուկի փոխարեն տպված է ջանալուկ: 26-րդ էջում փակագծերում պետք է լինի կապտամի, տպված է կապատամի: 29-րդ էջում ռուսերեն ПОВНЛНКА բառը տպված է ПОВЕЛНКА: 42-րդ էջում տպված է Սենտի-Ներին, պետք է լինի Սենտ-Իլերին: 57-րդ էջում տպված է մաւսելիա, պետք է լինի մաւսիլիա կամ մաւսիլեա: «Գարունը Հայաստանում» հոգվածի 60-րդ էջի աջ սյունակում 4-րդ տողը անտեղի կրկնված է 13-րդ տողում, իսկ այն բառերը, որ պետք է լինեին այստեղ, բնագծերապես բաց են թողնված:

Հանդեսն ընդհանուր առմամբ փառ չէ ձևավորված: Սպասարկված են տարբեր շրիֆտներ, նաև բազմաթիվ լուսանկարներ և ձևաանկարներ: Վերևում թվարկված բացերը հեշտ ուղղելի են: Կարծում ենք, որ կարելի է մամանակում «Հայաստանի բնություն»-ը կդառնա իր աշխատանքի ունի, բարձր մակարդակի՝ սկսած սրբագրական, տպագրական գործից, մինչև խոր լմբոնումը այն մեծ խնդիրների, որ Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը զետեղ են մեր Հայրենիքի առջև: Հետզհետե ավելի ու ավելի որոշակի կդառնան նաև այն կոնկրետ նպատակները, որոնց պետք է ձգտի հանդեսը յուրաքանչյուր հոգված, խնդրես և այն ուղիները, որոնցով պետք է առաջնորդվի խմբագրությունը, այդ հարցերը լուսարանելիս: Լեյս բոլորը նկատի առնելով, մենք կարող ենք ասել, որ թվարկված բացերը Գրոսրովին չեն նսեմացնում սկսված գործի մեծ արժեքը, այս հանդեսի մեծ նշանակությունը:

Ա. Կ. ԱՐԱՐԱՏՅԱՆ